



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՅ ՓԻ ԷՍ ՍԻ» Քաղաքական և Սոցիոլոգիական
Խորհրդատվությունների Ինստիտուտ ՍՊԸ
Տնօրեն՝ Հովհաննես Գրիգորյանի
թիվ _E-01/10_ առ 08 փետրվարի 2010թ.
ՀՐԱՄԱՆՈՎ

**«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտ**

**Տրանսպորտային միջոցների շահագործման
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտի պատվերով
տրանսպորտային միջոցների շահագործումը**

Տրանսպորտային միջոցների շահագործումը «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի (այսուհետ՝ IPSC) պատվերով ենթադրում է հետևյալ դրույթները.

1. Ծառայություն մատուցող ընկերությանն առնչվող կանոններ

- 1.1. Անհրաժեշտ է ապահովել նախապես պատվիրված մեքենաների քանակը նշված ժամին և նշված տարածքում (գրասենյակում՝ Ք. Երևան, Թումանյան 32/1փ. հասցեով՝ Խնկո Ապր անվան գրադարանի բակում, կայանատեղի հարևանությամբ):
- 1.2. Մեքենաները պետք է չուշանան նշված ժամից, որպեսզի չերկարացնեն մարզ ուղևորվող խմբի աշխատանքը:
- 1.3. Այն դեպքում, երբ մեքենաները այցելում են մի քանի բնակավայրեր (1 օրվա ընթացքում այցելելու են 1-6 գյուղ և քաղաք ՀՀ տարածքում), յուրաքանչյուր բնակավայրում անհրաժեշտ է սպասել մինչև խումբն ավարտի իր աշխատանքը, ինչից հետո խմբին շարունակաբար տեղափոխել մյուս բնակավայրեր: Վարորդները պետք է պատրաստ լինեն, որ բնակավայրերը հնարավոր է լինեն շատ հեռու և դժվարանցանելի:
- 1.4. Երևան վերադառնալով՝ տրանսպորտային միջոցները պետք է խմբի անդամներին հասցնեն մինչև տուն ձմռանը ժամը 21.00-ից հետո, ամռանը ժամը 22.00-ից հետո: Եթե Երևան են հասնում նշված ժամից ավելի շուտ, ապա խմբի անդամներին հասցնում են մինչև IPSC-ի գրասենյակ (Ք. Երևան, Թումանյան 32/1փ. հասցեով՝ Խնկո Ապր անվան գրադարանի բակում, կայանատեղի հարևանությամբ):
- 1.5. Ուղևորության հետ կապված մանրամասները՝ կիլոմետրաժ, սպասելավարձ, գումար, ամսաթիվ, նշվում են սույն կանոնակարգին կից հավելվածում տրված ձևում:

2. Տրանսպորտային միջոցին առնչվող կանոններ

- 2.1 Ելնելով կազմակերպության աշխատանքների բնույթից, այն է՝ շարքային քաղաքացիների հետ անմիջական շփումներից, որոնք հաճախ ենթադրում են սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ, խիստ ցանկալի է, որ կազմակերպությանը սպասարկող մեքենաները չլինեն շքեղ՝ սոցիալական անարդարությունն ընդգծող: Առանձին դեպքերում ցանկալի է, որ սպասարկող մեքենաները տարբերվեն հատուկ գունային տարբերանշանով:
- 2.2 Մեքենաները պետք է ժամանեն գրասենյակ՝ նախապես լինելով վառելիքով լիցքավորված (բենզին, գազ) և լվացված:

2.3 Մեքենայի հաշվիչները պետք է լինեն սարքին վիճակում և ընթացքում չանջատվեն: Հաշվիչները պետք է միացնել IPSC կողմից ներկայացված ժամանակից 10 րոպե անվճար սպասելուց հետո:

2.4 Մեքենան, որը ենթարկվում է շահագործման IPSC-ի կողմից, պետք է ապահովված լինի հետևյալ պայմաններով.

- ունենա հարմարավետ նստատեղեր,
- ունենա ամրագոտիներ,
- ունենա գործող ջեռուցման համակարգ:

3. Վարորդներին առնչվող կանոններ

3.1 Վարորդները պետք է լինեն փորձառու և աշխատանքային փորձ ունենան նաև մարզերում:

3.2 Վարորդները պետք է պատրաստ լինեն աշխատել ճկուն գրաֆիկով՝ առավոտից մինչև ուշ գիշեր:

3.3 Վարորդները պետք է ուղևորվող խմբին հասցնեն այն տարածքը, որտեղ որ նրանք պահանջում են և խմբի անդամներին վերցնեն նշված տարածքներից՝ անկախ այն հանգամանքից, որ ճանապարհները կարող են լինել քանդված և դժվար անցանելի:

3.4 Օրվա ողջ հատվածում՝ սկսած մարզ ուղևորվելուց մինչև Երևան հետվերադարձը վարորդները պետք է լինեն անվերապահորեն հասանելի խմբի համար: Ցանկալի է, որ յուրաքանչյուր վարորդ ունենա բջջային հեռախոսահամար, որը տրամադրի խմբի անդամներին և լինի մշտապես հասանելի ողջ օրվա ընթացքում:

3.5 Վարորդները պետք է լինեն պատասխանատու, շուտ կողմնորոշվող և հնարավորինս համագործակցող:

3.6 Վարորդները պարտավոր են պահպանել վարքի էթիկական և բարոյական նորմերն ու կանոնները, ինչպես աշխատակիցների, այնպես էլ տեղաբնակների նկատմամբ:

3.7 Վարորդները պարտավոր են մեքենայի ներսում չծխել, երաժշտությունը բարձր չմիացնել և չվարել մեքենան շատ արագ (60կմ/ժ՝ բնակավայրերի ներսում, 100կմ/ժ բնակավայրերից դուրս սահմանափակմամբ՝ IPSC բոլոր պատվերների կատարման ժամանակ):

3.8 Վարորդները պետք է հիշեն, որ նրանք պատասխանատու են ավտոմեքենայում նստած ուղևորների համար:



3.9 Վարորդները պետք է կոնֆլիկտի մեջ չմտնեն խմբի անդամների հետ և ձգտեն առավելագույնս համագործակցել:

3.10 Վարորդները պետք է հնարավորինս սահմանափակեն անձնական շփումները խմբի անդամների հետ:

3.11 Վարորդները պարտավոր են պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները:

- 3.12 Վարորդները պետք է ակոնհոլային խմիչքներից զերծ մնան ողջ ուղևորության ընթացքում:
- 3.13 Վարորդները պետք է չադոտոեն շրջակա միջավայրը և ցուցաբերեն հարգանք բնության նկատմամբ:
- 3.14 Վարորդները ոչ մի պարագայում չպետք է միջամտեն հետազոտության իրականացման ընթացքին և խմբի անդամների աշխատանքին, բացառությամբ ֆորս-մաժորային իրավիճակներին (վեճեր, կոնֆլիկտներ, ուստիկանության միջամտություն և այլն):

Հավելված

 Հաճախորդների սպասարկման քարտ մարդատար մեքենաներով		 Հաճախորդների սպասարկման քարտ մարդատար մեքենաներով	
Ծառայություններ մատուցող՝ Պատվիրատու՝ «Այ Փի Էս Մի» Քաղ. և սոց. Խոր. Ինստ.		Ծառայություններ մատուցող՝ Պատվիրատու՝ «Այ Փի Էս Մի» Քաղ. և սոց. Խոր. Ինստ.	
Մեքենայի Պ/համարանիշը _____		Մեքենայի Պ/համարանիշը _____	
<i>Ուղղությունը (բնակավայրեր)</i>		<i>Ուղղությունը (բնակավայրեր)</i>	
1.	4.	1.	4.
2.	5.	2.	5.
3.	6.	3.	6.
Ընդհանուր վազք _____	կմ	Ընդհանուր վազք _____	կմ
Սպասելաժամանակ _____	ժ _____ր	Սպասելաժամանակ _____	ժ _____ր
Ընդհանուր գումար _____	դր	Ընդհանուր գումար _____	դր
Պատվիրատու _____	(Անուն, ազգանուն, ստորագրություն)	Պատվիրատու _____	(Անուն, ազգանուն, ստորագրություն)
Վարորդ _____	(Անուն, ազգանուն, ստորագրություն)	Վարորդ _____	(Անուն, ազգանուն, ստորագրություն)
«___» _____ 20__թ.		«___» _____ 20__թ.	